ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1

ք. Երևան «15» 05 2020թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինպլյուս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Նազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 476,000,000 (չորս հարյուր յոթանասունվեց միլիոն) ՀՀ դրամ, որից 79,333,333.33 (յոթանասունինը միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3. ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011025823 ՀՎՀՀ 02815457 գլխավոր քարտուղար Հ. Բաղդասարյան /ստորագրություն/ Կ.Տ.	«Շինպլյուս» ՍՊԸ ՀՀ. ք. Երևան. Աշտարակի խճ. 47/18 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ ՀՀ 220553330550000 ՀՎՀՀ 00891777 տնօրեն Տ. Նազարյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/37-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
I	**Երթևեղելի մաս**				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի ֆրեզավորում h=5սմ	մ^2	49374	0.618070	30516.597800
2	Փոսային նորոգում h=3-5սմ	մ^2	493.5	10.008322	4939.107089
3	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ	տոն	1044.26	41.152438	42973.844915
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ^2	49374	4.420571	218261.250196
	1.Ընդամենը				**296690.800000**
II	**Մայթեր**				
1	Մայթերի բուսականության քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^2	1870	0.764972	1430.498081
2	Մայթերի վրա կուտակված գրունտի և քայքայված ծածկի մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^3	645	1.758425	1134.183872
3	Մայթերի ա/բ պատվածքի քանդում h=3սմ և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^2	10225.7	1.758425	17981.122518
4	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	820	5.408114	4434.653648
5	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	843	12.527544	10560.719795
6	Բետոնե եզրաքարի վերականգնում միաձույլ բետոնով B15 /120գծ.մ/	մ^3	7.2	48.499637	349.197387
7	Բետոնե եզրաքարի վերականգնում ավազացեմենտե շաղախով/կրկնակի սվաղ/	մ^2	241.7	1.379621	333.454389
8	Նոր բետոնե եզրաքարի իրականացում միաձույլ բետոնով/20x45սմ/ B15 /299 գծ.մ/	մ^3	26.91	5.437621	146.326370
9	Գոյություն ունեցող ոչ պիտանի բետոնե եզրաշարի / 10x20սմ/ քանդում, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	գծ.մ	2602	0.551848	1435.909506
10	Հավաքովի բետոնե եզրաշարի 10x20սմ իրականացում	գծ.մ	1194	0.108752	129.850379
11	Մայթերի խճային հիմք h=12սմ	մ^2	5360.7	0.027592	147.914683
12	Մանրահատիկա/բետոն h=3սմ	մ^2	12332.8	3.002493	37029.144524

13	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0.65մ3), բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	16	0.551848	8.829574
14	Նույնը ձեռքով	մ³	3	1.758425	5.275274
	2.Ընդամենը				**75127.080000**
III	**Թեքուղիներ**				
1	Գոյություն ունեցող եզրաքարերի քանդում, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	4.3	5.408114	23.254891
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	239.8	12.527544	3004.105109
	3.Ընդամենը				**3027.360000**
IV	**Կողնակներ**				
1	Կողնակների խոտածածկի քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ²	560	0.764972	428.384452
2	Կողնակների ամրացում կոպճային շերտով h=10սմ	մ²	2583	0.388841	1004.375548
	4.Ընդամենը				**1432.760000**
V	**Ուղիներ**				
1	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	144	10.008322	1441.198421
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	540.6	0.261802	141.530169
3	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	540.6	2.028595	1096.658719
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	3330.8	4.420571	14724.036378
5	Ավազակոպճային շերտ մետաղական խողովակների տակ h=10սմ	մ³	1.5	2.618020	3.927030
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	30.6	0.849295	25.988417
7	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	30	22.324364	669.730930
8	Խողովակների վաքի հետ միացման միաձույլ բետոն B20	մ³	0.18	48.499637	8.729935
	5.Ընդամենը				**18111.800000**
VI	**Մուտքեր**				
1	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	52.9	10.008322	529.440253
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	48.8	0.261802	12.775938
3	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	48.8	2.028595	98.995460
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	1097.4	3.436113	3770.790641
5	Ավազակոպճային շերտ մետաղական խողովակների տակ h=10սմ	մ³	0.25	2.618020	0.654505
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	5.1	0.849295	4.331403
7	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	5	22.324364	111.621822
8	Խողովակների վաքի հետ միացման միաձույլ բետոն B20	մ³	0.06	48.499637	2.909978
	6.Ընդամենը				**4531.520000**
VII	**Վաքեր**				

1	Գոյություն ունեցող վնասված Ճ-2-20 հավաքովի վաքերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում, լցակույտ 5.0կմ /V=0.1մ³, G=0.24տոն,/75 հատ/	մ³	7.5	0.540811	4.056086
2	Խճային շերտ վաքերի տակ h=8սմ	մ³	3	0.225154	0.675462
3	Ճ-2-20 նոր հավաքովի վաքերի տեղադրում	հատ	75	14.767074	1107.530538
4	Մասնակի քայքայված Ճ-2-20 վաքերի կրկնակի սվաղ ավազացեմենտե շաղախով	մ²	112.5	1.379621	155.207359
5	Գոյություն ունեցող վնասված L=3.0մ; 34x30սմ չափսի/ 5 հատ/ հավաքովի ե/բ վաքերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ/V=0.24մ³; G=0.6տոն/	մ³	42	0.540811	22.714080
6	Գոյություն ունեցող վնասված L=3.0մ; 34x30սմ չափսի հավաքովի ե/բ վաքերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ/V=0.24մ³; G=0.6տոն/	հատ	5	4.542816	22.714080
7	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	0.75	0.261802	0.196352
8	Ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ	հատ	5	14.685789	73.428947
9	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	18.9	0.849295	16.051669
10	IV կարգի գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ/նոր տեղադրվող Ճ-2-20 վաքերի փոսորակում/	մ³	90	1.758425	158.258215
11	Խճային շերտ երկայնական վաքերի տակ h=8սմ	մ³	36.3	0.225154	8.173095
12	Ճ-2-20 հավաքովի նոր վաքերի տեղադրում	հատ	908	14.767074	13408.503050
13	IV կարգի գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ/նոր տեղադրվող 30x34սմ կտրվածքով վաքերի փոսորակում/	մ³	37	1.758425	65.061711
14	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	9.3	2.618020	24.347587
15	Ե/բ հավաքովի նոր վաքերի տեղադրում L=3.0մ	հատ	62	14.685789	910.518937
16	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	234.36	0.849295	199.040699
17	Նոր տեղադրվող բետոնե վաքերի վերջում ՊԿ736+48-ում խողովակի մոտ IV կարգի գրունտի մշակում ձեռքով տեղում կուտակումով	մ³	0.5	5.319818	2.659909
18	ՊԿ736+48-ում խողովակի վրա անցքի բացում ջրահեռացման համար	մ³	0.02	1.081623	0.021632
19	ՊԿ744+44-750+24-ում ձախից վաքի վնասված պատի վերականգնում /0.6x0.2մ կտրվածքով/ 40 գծ.մ միաձույլ բետոնով B20	մ³	4.8	47.616790	228.560592
	7.Ընդամենը				**16407.720000**
VIII	**Ջրնետներ/8 տեղ/**				
1	IV կարգի գրունտի մշակում ձեռքով , կողլիցքով	մ³	12	5.319818	63.837822
2	Բետոնե եզրաքարի մեջ անցքի բացում	մ³	0.4	53.418924	21.367570
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	2.4	2.618020	6.283248
4	Միաձույլ բետոն B15	մ³	1.28	48.499637	62.079535
5	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	32.8	0.849295	27.856865

6	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=47.2կգ; δ=6մմ	գծ.մ	32	29.546273	945.480728
7	Խողովակի ամրացում միաձույլ բետոնով B15	մ³	0.2	48.499637	9.699927
8	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	6.5	4.552970	29.594305
	8.Ընդամենը				**1166.200000**
IX	**ՊԿ744+44-ում խողովակի մաքրում, իսկ մուտքում գոյություն ունեցող ջրհորների միացում**				
1	Ա/բ պատվածքի քանդում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ//h=5 սմ/	մ²	7.5	1.758425	13.188185
2	IV կարգի գրունտի մշակում պարզարանի/отстойник/ և խողովակի փոսորակում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	3	1.758425	5.275274
3	Նույնը տեղում կուտակումով	մ³	8	0.725129	5.801030
4	Ջրհորների բետոնե պատի քանդում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	0.8	1.964580	1.571664
5	Ոչ պիտանի մետաղական խողովակի ապատեղակայում	գծ.մ	3.5	42.933805	150.268316
6	Ավազակոպճային շերտ հիմնատակում h=10սմ	մ³	1.2	2.618020	3.141624
7	Ջրհորի միաձույլ բետոն B15	մ³	4.1	53.007040	217.328864
8	Ջրհորների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	18.5	0.849295	15.711951
9	Ջրհորի մետաղական շրջանակի և ճաղաշարի տեղադրում				
	մետաղական շրջանակ L90x90x6մմ;	գծ.մ	11.2	6.160890	69.001971
	մետաղական ճաղաշար AIIIØ28մմ;	տոն	0.17359	624.666439	108.435847
10	Գոյություն ունեցող d=530մմ ,L=15.0մ խողովակի մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	3	1.758425	5.275274
	9.Ընդամենը				**595.000000**
X	**Մետաղական ճաղաշար L=24.0գծ.մ/ՊԿ743+60-ՊԿ743+84-ում գոյություն ունեցող վաքի համար /**				
1	Վաքի մետաղական շրջանակի և ճաղաշարի տեղադրում				
	մետաղական շրջանակ L90x90x6մմ;	գծ.մ	49.46	6.160890	304.717631
	մետաղական ճաղաշար AIIIØ25մմ;	տոն	0.48756	624.666439	304.562369
	10.Ընդամենը				**609.280000**
XI	**Դիտահորեր**				
1	Մայթի վրայի դիտահորի բացակա թուջե կափարիչ d=740մմ	հատ	2	112.577071	225.154142
2	Մայթի վրա դիտահորի նոր սալի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	3	198.397401	595.192204
3	Երթևեկելի մասի դիտահորերի սալերի ապատեղակայում , տեղակայում	հատ	8	2.847538	22.780301
4	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	3.45	48.499637	167.323748
5	Երթևեկելի մասի դիտահորի նոր սալերի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	4	198.397401	793.589605
	11.Ընդամենը				**1804.040000**

XII	**Հենապատեր**				
1	IV կարգի գրունտի մշակում բարձում, բարձում էքսկավատորով/0.65մ³/, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	33	0.551848	18.210997
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	30	0.441479	13.244361
3	Գոյություն ունեցող պատի քանդում էքսկավատորով/0.65մ³/, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	11.5	0.551848	6.346256
4	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ³	4.5	2.618020	11.781091
5	Հիմքի խամքարե բետոն B20	մ³	19	48.499637	921.493105
6	Իրանի խամքարե բետոն B20	մ³	21	48.353568	1015.424936
7	Ներդիր էլեմենտներ	տոն	0.0257	359.564341	9.240804
8	Միաձույլ բետոնե թասակ B20	մ³	0.8	48.499637	38.799710
9	Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	66	0.849295	56.053448
10	Երեսապատում սվաղով	մ²	30	1.379621	41.388629
11	Հեռադարձ լիցք	մ³	30	0.016555	0.496664
	12.Ընդամենը				**2132.480000**
XIII	**Բազրիքներ**				
1	Մետաղական բազրիքների ապատեղակայում,տեղում կուտակումով -77 գծ.մ	տոն	1.25	23.398372	29.247965
2	IV կարգի գրունտի փորում բազրիքների հենարանների հիմնատակում	մ³	1.1	0.441479	0.485627
3	Ապատեղակայված բազրիքների տեղակայում արդեն լայնացված մայթեզրում/62 գծ.մ/	տոն	1.006	49.194004	49.489168
4	Միաձույլ բետոն բազրիքների հենարանների հիմնատակում B15	մ³	1.1	48.893767	53.783144
5	Ապատեղակայված բազրիքների տեղակայում արդեն կառուցված հենապատի ներդիրներին/15 գծ.մ/	տոն	0.244	49.194004	12.003337
6	Բազրիքների ներկում	տոն	1.25	21.080608	26.350761
	13.Ընդամենը				**171.360000**
XIV	**Արհեստական կառուցվածքներ**				
Ա	**ՊԿ726+20-ում ե/բ խողովակ d=1.0մ**				
1	IV կարգի գրունտի մշակում խողովկի մուտքի և ելքի հունում, էքսկավատորով/0.65մ³/ կուտակումով	մ³	17	0.441479	7.505138
2	Խողովակի ներսի բերվածքների մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	9	1.758425	15.825821
Բ.	**ՊԿ731+25-ում ե/բ 2x2մ խողովակ**				
1	IV կարգի գրունտի մշակում խողովկի մուտքի և ելքի հունում, էքսկավատորով/0.65մ³/ կուտակումով	մ³	25	0.441479	11.036968
Գ.	**ՊԿ752+93-ում ե/բ կամուրջ կամրջատակի բերվածքների մաքրում**				
1	ՊԿ752+93-ում ե/բ կամուրջ կամրջատակի բերվածքների մաքրում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	35	1.758425	61.544861
Դ.	**ՊԿ723+02 ում ե/բ անասնացման 8-րդ հեծանի փոխարնումը նորով**				

1	Ա/բ պատվածքի քանդում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ h=10սմ	մ^2	10	1.758425	17.584246
2	Նույնը խճե հիմքը h=15սմ	մ^2	10	1.758425	17.584246
3	Նույնը IV կարգի գրունտը	մ^3	6	1.758425	10.550548
4	Ծածկի N31 բլոկի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^3	3.07	3.200721	9.826212
5	Հեծանի տակ ավազացեմենտե շաղախի տեղադրում	մ^3	0.01	36.421994	0.364220
6	Ծածկի նոր N31 բլոկի տեղակայում (660x100x53) V=3.07մ^3; P=7.7 տոն	հատ	1	1403.369856	1403.369856
7	Հավասարեցնող շերտ ավազացեմենտե շաղախով h=3սմ	մ^2	10	1.379621	13.796210
8	Ջրամեկուսացում техноэласт Б-ով	մ^2	10	6.401441	64.014413
9	Ավազացեմենտե պաշտպանիչ շերտ h=3սմ	մ^2	10	1.379621	13.796210
10	Հետադարձ լիցք ձեռքով, խտացումով	մ^3	3	2.428133	7.284399
11	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	10	0.261802	2.618020
12	Չափազատված խիճ h=16սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	10	3.737190	37.371900
13	Տաք, ծակոտկեն խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ^2	10	8.005422	80.054218
14	Հեծանների ներքևի մակերևույթի բետոնե պաշտպանիչ շերտի վերականգնում կրկնակի սվաղով	մ^2	20	1.379621	27.592419
15	Կամրջատակի բերվածքների մաքրում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^3	45	1.758425	79.129107
Ե	**ՊԿ731+12 Ե/բ անասնացում**				
1	Աջ կողնակի քանդում բուլդոզերով, տեղափոխում 20մ կուտակումով	մ^3	10	0.441479	4.414787
2	Գրունտի մաքրում ձեռքով	մ^3	1	5.408114	5.408114
3	ПР-6 կողավոր սալերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^3	2.16	3.090351	6.675158
4	Նոր ПР-6 կողավոր սալերի տեղակայում /V=1.08մ^3; G=2.7 տոն/	հատ	2	529.774453	1059.548905
5	Ավազացեմենտե շաղախ կողավոր սալերի տակ	մ^3	0.012	36.421994	0.437064
6	Կողավոր սալերի միացում ավազացեմերտե շաղախով	մ^3	0.107	36.421994	3.897153
7	պարույր Ø3մմ AI	տոն	0.00203	624.666439	1.268073
8	Ջրամեկուսացում „техноэласт Б"-ով	մ^2	20	6.401441	128.028826
9	Ավազացեմենտե պաշտպանիչ շերտ h=3սմ	մ^3	0.6	36.421994	21.853196
10	Գրունտի տեղափոխում բուլդոզերով 20մ, հետադարձ լիցք ձեռքով, խտացումով	մ^3	10	0.772588	7.725877
11	Անասնացումի տակ բերվածքների մաքրում ձեռքով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ^3	42	1.758425	73.853834
	14.Ընդամենը				**3193.960000**
XV	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
	Նախազգուշացնող	հատ	1	28.600605	28.600605
	Առավելության	հատ	65	28.600605	1859.039317
	Արգելող	հատ	5	28.600605	143.003024
	Թելադրող	հատ	28	28.600605	800.816937
	Հատուկ թելադրանքի	հատ	20	28.600605	572.012098

	Տեղեկատվության	հատ	4	28.600605	114.402420
	Գոյություն ունեցող ճանապարհային նշանների ապատեղակայում	հատ	3	1.898358	5.695075
Բ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	1.7468	94.752368	165.513437
	1.11	կմ	0.086	94.752368	8.148704
	1.2	կմ	5.692	94.752368	539.330480
	1.3	կմ	1.219	94.752368	115.503137
	1.5	կմ	3.262	94.752368	309.082225
	1.7	կմ	1.154	94.752368	109.344233
	1.13	մ²	4.2	4.734859	19.886409
	1.18	մ²	4.87	4.734859	23.058764
	1.19	մ²	6.72	4.734859	31.818254
	1.20	մ²	4.82	4.734859	22.822021
	1.14.1	մ²	113.76	4.734859	538.637579
	1.16.1	մ²	12.2	4.734859	57.765282
	15.Ընդամենը				**5464.480000**
XVI	**Ե/բ կամուրջ Քասախ գետի վրա ՊԿ740+93-ում, L=18.0մ**	հատ	1	45534.160000	45534.160000
	16.Ընդամենը				**45534.160000**
	Ընդհանուրը* (հազ. դրամ)				**476000.000**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%:
** Կապալառուն աշխատանքները կատարում է Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
L.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինպլյուս» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան. Աշտարակի խճ. 47/18
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220553330550000
ՀՎՀՀ 00891777
տնօրեն
Տ. Սարգսյան

/ստորագրություն/
L.S

Հավելված թիվ 2
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
1	Երթևեկելի մաս	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
2	Մայթեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
3	Թեքուղիներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
4	Կողնակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 165 օր հետո
5	Ուղիներ և մուտքեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 175 օր հետո
6	Վաքեր և ջրնետներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
7	Դիտահորեր		
8	Հենապատեր և բազրիքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո

9	**Արհեստական կառուցվածքներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
10	**Անվտանգության էլեմենտներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը**

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինպլյուս» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան. Աշտարակի խճ. 47/18
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220553330550000
ՀՎՀՀ 00891777
տնօրեն
Տ. Եսայան

/ստորագրություն/

Հավելված N 3
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/502	ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ.Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինպլյուս» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան. Աշտարակի խճ. 47/18
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220553330550000
ՀՎՀՀ 00891777
տնօրեն
Տ.Նազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն